ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում աուդիտորական գործունեություն իրականացնելու մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով,

հաստատելով Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում աուդիտորական ծառայությունների միասնական շուկա ստեղծելու ձգտումը,

ցանկանալով միասնական մոտեցումներ ձեւավորել աուդիտորական գործունեության կարգավորման եւ վերահսկողության կազմակերպման ու իրականացման նկատմամբ,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սահմանումները

1. Սույն համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

աուդիտի ենթարկվող անձ՝ անձ, որի հաշվապահական (ֆինանսական)

հաշվետվությունների եւ (կամ) նրա կողմից ներկայացվող այլ տեղեկատվության նկատմամբ անցկացվում է աուդիտ, կամ որին մատուցվում են աուդիտին հարակից ծառայություններ.

աուդիտ՝ աուդիտի ենթարկվող անձի հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների եւ (կամ) նրա կողմից ներկայացվող այլ ֆինանսական տեղեկատվության ստուգում՝ դրանց հավաստիության վերաբերյալ անկախ կարծիք արտահայտելու նպատակով.

աուդիտոր՝ ֆիզիկական անձ, որն ստացել է անդամ պետությունում աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու իրավունք.

աուդիտորական գործունեություն, աուդիտորական ծառայություններ՝ աուդիտի անցկացմանն ու վստահություն ապահովող այլ ստուգումների կատարմանը, ինչպես նաեւ աուդիտին հարակից ծառայությունների մատուցմանն ուղղված այն գործունեությունը, որն իրականացվում է աուդիտորական գործունեության ստանդարտներին համապատասխան.

աուդիտորական կազմակերպություն՝ առեւտրային կազմակերպություն հանդիսացող եւ անդամ պետությունում աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ստացած իրավաբանական անձ.

աուդիտորական եզրակացություն՝ պաշտոնական փաստաթուղթ, որը կազմվել է աուդիտորական կազմակերպության կամ անհատ աուդիտորի կողմից՝ աուդիտի անցկացման արդյունքների հիման վրա.

եզրակացություն՝ պաշտոնական փաստաթուղթ, որը կազմվել է աուդիտորական կազմակերպության կամ անհատ աուդիտորի կողմից՝ աուդիտից տարբերվող՝ վստահություն ապահովող ստուգումների կատարման արդյունքներով.

անհատ աուդիտոր՝ աուդիտոր, որն ստացել է որպես անհատ ձեռնարկատեր աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք.

օտարերկրյա աուդիտորական կազմակերպություն՝ կազմակերպություն, որն ստացել է անդամ պետություն չհանդիսացող պետությունում աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք, եւ որի կարգավիճակը հաստատվել է այդ պետության իրավասու մարմնի կողմից.

հաշվետվություն՝ պաշտոնական փաստաթուղթ, որը կազմվել է աուդիտորական կազմակերպության կամ անհատ աուդիտորի կողմից՝ աուդիտին հարակից ծառայություններ մատուցելիս.

աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստր՝ աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների համակարգված ցանկ, որն անդամ պետությունում վարում է դրա համար պատասխանատու մարմինը՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

աուդիտին հարակից ծառայություններ՝ աուդիտի ենթարկվող անձի հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների եւ (կամ) նրա կողմից ներկայացվող այլ ֆինանսական տեղեկատվության՝ վստահություն ապահովող ստուգումներից տարբերվող ստուգում, ինչպես նաեւ այլ ծառայություններ, որոնք, աուդիտորական գործունեության ստանդարտներին համապատասխան, ճանաչվում են որպես աուդիտին հարակից ծառայություններ.

Ֆինանսական շուկայի մասնակից՝ իրավաբանական անձ, որն իրականացնում է ֆինանսական ծառայությունների մատուցման գործունեություն:

2. Սույն համաձայնագրում գործածվող մյուս հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված իմաստներով:

Հոդված 2

Համաձայնագրի առարկան

Սույն համաձայնագրով կարգավորվում են մեկ անդամ պետության աուդիտորական կազմակերպությունների եւ անհատ աուդիտորների՝ մյուս անդամ պետություններում աուդիտորական գործունեություն իրականացնելու թույլտվության եւ մեկ անդամ պետության աուդիտորների՝ մյուս անդամ պետություններում աուդիտորական գործունեություն իրականացնելու թույլտվության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ սահմանվում են անդամ պետություններում աուդիտորական գործունեություն իրականացնելու եւ կարգավորելու միասնական մոտեցումները:

Հոդված 3

Աուդիտորական գործունեություն իրականացնելու թույլտվությունը

1. Աուդիտորական գործունեությունն անդամ պետությունում իրականացվում է տվյալ անդամ պետությունում աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ստացած անձանց կողմից:

Մեկ անդամ պետության աուդիտորական կազմակերպությունները (բացառությամբ սույն համաձայնագրի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 4-րդ կետում նշված աուդիտորական կազմակերպությունների) եւ անհատ աուդիտորները իրավունք ունեն աուդիտորական գործունեություն իրականացնելու մյուս անդամ պետություններում:

Աուդիտորական գործունեությունը կարող է իրականացվել անհատ աուդիտորների կողմից, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ:

2. Մեկ անդամ պետության աուդիտորները (բացառությամբ սույն համաձայնագրի 32-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձանց) իրավունք ունեն աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու մյուս անդամ պետություններում:

Հոդված 4

Աուդիտորական գործունեություն իրականացնող անձանց ներկայացվող պահանջները

1. Անդամ պետությունում որպես աուդիտորական կազմակերպություն աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ստանալու համար իրավաբանական անձը պետք է համապատասխանի հետեւյալ պահանջներին՝

ա) աշխատանքային պայմանագրերի հիման վրա հիմնական աշխատանքի վայրի տվյալ իրավաբանական անձի աշխատող հանդիսացող աուդիտորների՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված թվաքանակը չպետք է լինի երեքից պակաս.

բ) տվյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի՝ աուդիտորներին եւ (կամ) աուդիտորական կազմակերպություններին պատկանող մասնաբաժինը՝ 51 տոկոսից ոչ պակաս.

գ) տվյալ իրավաբանական անձի կոլեգիալ գործադիր մարմնում աուդիտորների թվաքանակը՝ այդ մարմնի կազմի առնվազն 50 տոկոսը: Տվյալ իրավաբանական անձի միանձնյա գործադիր մարմին հանդիսացող անձը պետք է լինի աուդիտոր.

դ) անթերի գործարար համբավ, որն արտահայտվում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների, այդ թվում՝ աուդիտորների մասնագիտական միավորումների (ինքնակարգավորվող կազմակերպություններ) կողմից

իրավաբանական անձի գործունեության, դրա մարմինների, սեփականատերերի, փոխկապակցված անձանց, դուստր եւ կախյալ կազմակերպությունների գործարար որակների, գործարար վարքագծի վերաբերյալ դրական գնահատականով.

ե) աշխատանքի որակի ներքին վերահսկողություն իրականացնելու կանոնների առկայություն:

2. Աուդիտորական գործունեություն իրականացնելու ցանկություն ունեցող իրավաբանական անձը չի կարող ստեղծվել բաց (հանրային) բաժնետիրական ընկերության կամ պետական (մունիցիպալ) ունիտար ձեռնարկության ձեւով:

3. Անդամ պետությունում որպես անհատ աուդիտոր աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ստանալու համար անդամ պետության օրենսդրությանը համապատասխան որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձը պետք է համապատասխանի հետեւյալ պահանջներին՝

ա) սույն համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պահանջներին համապատասխանությունը.

բ) աշխատանքի որակի ներքին վերահսկողություն իրականացնելու կանոնների առկայությունը:

4. Անդամ պետությունն իրավունք ունի իր օրենսդրությամբ սահմանելու լրացուցիչ պահանջներ տվյալ անդամ պետության իրավաբանական անձինք հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների եւ տվյալ անդամ պետությունում որպես անհատ ձեռնարկատերեր գրանցված անհատ աուդիտորների նկատմամբ՝ ի լրումն սույն հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով սահմանված պահանջների:

Հոդված 5

Աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցող անձանց ներկայացվող պահանջները

1. Անդամ պետությունում աուդիտորական գործունեության իրականացմանը որպես աուդիտոր մասնակցելու իրավունք ստանալու համար ֆիզիկական անձը պետք է համապատասխանի հետեւյալ պահանջներին՝

ա) բարձրագույն կրթության առկայություն.

բ) աուդիտորական գործունեություն իրականացնելու կամ հաշվապահական հաշվառում վարելու եւ հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ կազմելու հետ կապված գործնական աշխատանքի փորձի առկայություն.

գ) անթերի գործարար (մասնագիտական) համբավ, որն արտահայտվում է ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների ու տնտեսության ոլորտում հանցագործությունների համար չհանված կամ չմարված դատվածության բացակայությամբ, ինչպես նաեւ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, այդ թվում՝ աուդիտորների մասնագիտական միավորումների (ինքնակարգավորվող կազմակերպություններ) կողմից ֆիզիկական անձի գործարար եւ մասնագիտական որակների, նրա գործարար վարքագծի վերաբերյալ դրական գնահատականով.

դ) աուդիտորի որակավորման ատեստատի (վկայականի, հավաստագրի) առկայություն:

2. Աուդիտորն աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցում է որպես աուդիտորական կազմակերպության աշխատող կամ անհատ աուդիտոր՝ իր եւ համապատասխանաբար աուդիտորական կազմակերպության կամ անհատ աուդիտորի միջեւ աշխատանքային պայմանագրի հիման վրա:

Հոդված 6

Աուդիտորական գործունեության իրականացման (աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու) իրավունքի ծագումը եւ դադարեցումը

1. Աուդիտորական գործունեություն իրականացնելու (աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու) ցանկություն ունեցող անձը որպես աուդիտորական կազմակերպություն, անհատ աուդիտոր աուդիտորական գործունեություն իրականացնելու (որպես աուդիտոր աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու) իրավունք ունի իր մասին տեղեկություններն աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկվելու օրվանից:

2. Որպես աուդիտորական կազմակերպություն, անհատ աուդիտոր աուդիտորական գործունեություն իրականացնելու (որպես աուդիտոր աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու)՝ անձի իրավունքը ենթակա է չեղյալ ճանաչման այն դեպքում, երբ անձը դադարում է համապատասխանել սույն համաձայնագրի 4-րդ եւ 5-րդ հոդվածներով սահմանված պահանջներին, ինչպես նաեւ անդամ պետության օրենսդրությամբ սահմանվող այլ հիմքերով եւ կարգով, եւ դադարեցվում է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում այդ իրավունքի չեղյալ ճանաչման մասին տեղեկություններն ընդգրկվելու օրվանից:

Հոդված 7

Որակավորման քննությունը

1. Որակավորման քննությունն անցկացվում է աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի մասնագիտական որակավորումն ստուգելու նպատակով:

2. Որակավորման քննության հանձնման արդյունքում պետք է հաստատվի աուդիտորական գործունեության իրականացմանն առնչվող բնագավառներում տեսական գիտելիքների անհրաժեշտ մակարդակը եւ աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու ցանկություն ունեցող անձի՝ գործնական աշխատանքում նշված գիտելիքներն օգտագործելու կարողությունը:

3. Տեսական գիտելիքների մակարդակի ստուգումը պետք է անցկացվի հետեւյալ բնագավառներում՝

ա) աուդիտորական գործունեություն.

բ) աուդիտորական գործունեության վերաբերյալ անդամ պետության օրենսդրություն.

գ) հաշվապահական հաշվառման վերաբերյալ անդամ պետության օրենսդրություն.

դ) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ.

ե) աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներ.

զ) ռիսկերի կառավարում, աշխատանքի որակի ներքին վերահսկողություն.

է) կառավարչական հաշվառում.

ը) աուդիտորների մասնագիտական էթիկա եւ անկախություն.

թ) հաշվապահական հաշվառման տեսություն.

ժ) ֆինանսական վերլուծություն.

ժա) ֆինանսական հաշվառում:

4. Տեսական գիտելիքների մակարդակի ստուգումը պետք է անցկացվի նաեւ հետեւյալ բնագավառներում (այնքանով, որքանով այդ բնագավառները կապված են աուդիտորական գործունեության իրականացման հետ)՝

ա) տեղեկատվական տեխնոլոգիաներ եւ համակարգչային համակարգեր.

բ) մաթեմատիկա, վիճակագրություն.

գ) անդամ պետության հարկային, քաղաքացիական, աշխատանքային օրենսդրություն, ինչպես նաեւ անվճարունակության (սնանկության) վերաբերյալ անդամ պետության օրենսդրություն.

դ) ընդհանուր տնտեսական տեսություն, ֆինանսներ, միկրոտնտեսություն.

ե) կազմակերպության ֆինանսների կառավարման հիմնական սկզբունքներ:

5. Անդամ պետությունը՝

ա) սահմանում է որակավորման քննության անցկացման կարգը, որով նախատեսվում է նաեւ հավակնորդի՝ որակավորման քննությանը մասնակցելու կարգը, ինչպես նաեւ որակավորման քննության արդյունքները որոշելու կարգը: Որակավորման քննության առնվազն մի մասը պետք է անցկացվի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով (թեստավորման ձեւով եւ այլն).

բ) սահմանում է այն մարմինը (մարմինները), որն իրականացնում է որակավորման քննության անցկացումը: Որակավորման քննության անցկացում իրականացնող մարմիններ կարող են լինել անդամ պետության պետական մարմինները, աուդիտորների մասնագիտական միավորումները (ինքնակարգավորվող կազմակերպությունները), հատուկ այդ նպատակով ստեղծված կազմակերպությունները.

գ) սահմանում է աուդիտորի որակավորման ատեստատի (վկայականի, հավաստագրի) տրամադրման կարգը.

դ) իրավունք ունի սահմանելու բարձրագույն կրթության

մասնագիտությունների ցանկ՝ աուդիտորական գործունեության իրականացմանը որպես աուդիտոր մասնակցելու իրավունք ստանալուն հավակնող ֆիզիկական անձի համար.

ե) իրավունք ունի սահմանելու սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերում նշված բնագավառներում այնպիսի գիտելիքների ստուգումից ազատելու կարգը, որոնց մասով առկա է միջազգային ատեստատ (վկայական, հավաստագիր, դիպլոմ).

դ) իրավունք ունի սահմանելու բարձրագույն կրթության այն կրթական ծրագրերին ներկայացվող պահանջները, որոնցով անցկացվել է աուդիտորական գործունեության իրականացմանը որպես աուդիտոր մասնակցելու իրավունք ստանալուն հավակնող ֆիզիկական անձի ուսուցումը:

6. Մեկ անդամ պետությունում տրված՝ աուդիտորի որակավորման ատեստատը (վկայականը, հավաստագիրը) վավերական է մյուս անդամ պետություններում եւ անժամկետ է կամ գործում է մինչեւ դրա գործողության ժամկետի ավարտը (եթե այդպիսի ժամկետ սահմանված է):

Հոդված 8

Գործնական աշխատանքի փորձը

1. Սույն համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված՝ աուդիտորական գործունեության իրականացմանը որպես աուդիտոր մասնակցելու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի գործնական աշխատանքի փորձը պետք է ապահովի աուդիտորական գործունեությանն առնչվող բնագավառներում տեսական գիտելիքները գործնական աշխատանքում օգտագործելու այդ անձի կարողությունը:

2. Աուդիտորական գործունեության իրականացմանը որպես աուդիտոր մասնակցելու ցանկություն ունեցող ֆիզիկական անձանց՝ աուդիտորական

գործունեություն իրականացնելու կամ հաշվապահական հաշվառում վարելու եւ հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ կազմելու հետ կապված նվազագույն աշխատանքային ստաժը սահմանվում է անդամ պետության օրենսդրությամբ եւ չի կարող 3 տարուց պակաս լինել:

Ընդ որում, նշված աշխատանքային ստաժի վերջին երեք տարիներից առնվազն մեկ տարին պետք է անցկացված լինի աուդիտորական կազմակերպությունում՝ աուդիտորական գործունեության իրականացման հետ կապված պաշտոններում՝ չխախտելով սույն համաձայնագրի 32-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները:

Հոդված 9

Ուսուցում՝ որակավորման բարձրացման ծրագրերով

1. Աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու (որպես անհատ աուդիտոր աուդիտորական գործունեություն իրականացնելու) իրավունքի ծագման տարվան հաջորդող տարվանից սկսած՝ աուդիտորը պետք է անցնի ուսուցում՝ որակավորման բարձրացման ծրագրերով (այսուհետ՝ ուսուցում):

2. Աուդիտորների ուսուցմամբ պետք է ապահովվի նրանց տեսական գիտելիքների, մասնագիտական հմտությունների ու կարողությունների անհրաժեշտ մակարդակի պահպանումը:

3. Աուդիտորների ուսուցման նվազագույն տեւողությունը սահմանվում է անդամ պետության օրենսդրությամբ եւ չի կարող 80 ժամից պակաս լինել՝ իրար հաջորդող երկու օրացուցային տարիների ընթացքում:

4. Անդամ պետությունը սահմանում է աուդիտորների կողմից ուսուցում անցնելու պարբերականությունը եւ կարգը:

Հոդված 10

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը

1. Աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի, աուդիտորի վերաբերյալ տեղեկությունները ենթակա են ընդգրկման աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում:

2. Աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի, աուդիտորի վերաբերյալ տեղեկությունները համարվում են աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկված կամ դրանից հանված՝ նշված ռեեստրում համապատասխան գրառում կատարելու օրվանից:

3. Աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը, աուդիտորը պետք է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ունենան գրառման անհատական (հիմնական) գրանցման համար (այսուհետ՝ անհատական գրանցման համար):

4. Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը, սույն համաձայնագրի 11-րդ եւ 12-րդ հոդվածներով նախատեսված տեղեկություններից բացի, պետք է պարունակի նաեւ հետեւյալ տեղեկությունները՝

ա) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրի վարումն իրականացնող մարմնի լրիվ անվանումն ու հասցեն.

բ) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողությունն

իրականացնող մարմնի լրիվ անվանումն ու հասցեն.

գ) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների նկատմամբ ներգործության միջոցներ կիրառելու համար լիազորված մարմնի լրիվ անվանումն ու հասցեն:

5. Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարվում է էլեկտրոնային ձեւով եւ պետք է հասանելի լինի «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում (այսուհետ՝ Ինտերնետ ցանց)՝ աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարող մարմնի պաշտոնական կայքում:

6. Անդամ պետությունն ապահովում է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում պարունակվող տեղեկությունների թափանցիկությունն ու հանրամատչելիությունը՝ բացառությամբ աուդիտորի անձնական տվյալների: Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկված՝ աուդիտորի անձնական տվյալները շահագրգիռ անձանց տրամադրվում են միայն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով եւ կարգով:

7. Աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը, աուդիտորը պատասխանատվություն են կրում աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկված՝ իրենց մասին տեղեկությունների հավաստիության, ինչպես նաեւ աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրի վարումն իրականացնող մարմնին (մարմիններին) այդ տեղեկությունների փոփոխության մասին ժամանակին ծանուցելու համար:

8. Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկված տեղեկությունները պետք է պահվեն

արդիական վիճակում:

Հոդված 11

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկվող՝ անհատ աուդիտորի եւ աուդիտորի մասին տեղեկությունները

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկվում են անհատ աուդիտորի եւ աուդիտորի մասին առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի).

բնակության (գրանցման) վայրը.

անհատական գրանցման համարը.

տեղեկություններ՝ որպես անհատ ձեռնարկատեր պետական գրանցման վերաբերյալ (անհատ աուդիտորի համար).

տեղեկություններ՝ աուդիտորի որակավորման ատեստատի (վկայականի, հավաստագրի) վերաբերյալ, աուդիտորի որակավորման ատեստատի (վկայականի, հավաստագրի) համարը, որակավորման ատեստատի (վկայականի, հավաստագրի) տրամադրման վերաբերյալ որոշում ընդունելու ամսաթիվը, նշված ատեստատը (վկայականը, հավաստագիրը) տրամադրած մարմնի (կազմակերպության) անվանումը.

կոնտակտային հեռախոսահամարը (անհատ աուդիտորի համար).

էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում).

Ինտերնետ ցանցում պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում).

տեղեկություններ այն աուդիտորական կազմակերպության կամ անհատ աուդիտորի վերաբերյալ, որի աշխատողն է աուդիտորը՝ աշխատանքային պայմանագրի հիման վրա (նշելով աուդիտորական կազմակերպության անվանումը կամ անհատ աուդիտորի անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), աուդիտորական կազմակերպության գտնվելու վայրը կամ անհատ աուդիտորի բնակության (գրանցման) վայրը, Ինտերնետ ցանցում պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում), աուդիտորական կազմակերպության կամ անհատ աուդիտորի անհատական գրանցման համարը).

տեղեկություններ՝ մյուս անդամ պետություններում եւ անդամ պետություն չհանդիսացող պետություններում որպես աուդիտոր գրանցված լինելու վերաբերյալ (նշելով գրանցող մարմնի անվանումը եւ աուդիտորի անհատական գրանցման համարը (առկայության դեպքում)).

տեղեկություններ՝ աուդիտորական գործունեության վերաբերյալ անդամ պետության օրենսդրության պահանջների խախտման համար ներգործության միջոցներ կիրառելու վերաբերյալ (նշելով ներգործության միջոցների կիրառման վերաբերյալ որոշում ընդունած՝ անդամ պետության մարմնի անվանումը, նշված որոշման ընդունման ամսաթիվը, նշված որոշման համարը (առկայության դեպքում), խախտման տեսակը եւ կիրառված ներգործության միջոցների վերաբերյալ տեղեկությունները).

տեղեկություններ՝ անհատ աուդիտորի կողմից աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն անցնելու վերաբերյալ (նշելով աշխատանքի որակի ստուգում անցկացնելու ամսաթիվը եւ անդամ պետության՝ ստուգում անցկացրած մարմնի անվանումը).

տեղեկություններ՝ որպես անհատ ձեռնարկատեր աուդիտորի գործունեություն սկսելու (այն դադարեցնելու) վերաբերյալ (նշելով այդպիսի գործունեություն սկսելու (այն դադարեցնելու) մասին գրառման ամսաթիվը եւ

պետական գրանցման համարը):

Այն դեպքում, երբ աուդիտորը, որի մասին տեղեկություններն ընդգրկվել են աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում, իրավունք ունի մասնակցելու աուդիտորական գործունեության իրականացմանը միայն այն անդամ պետությունում, որտեղ այն ընդգրկված է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում, ռեեստրը պետք է պարունակի տվյալ սահմանափակման վերաբերյալ նշում:

Հոդված 12

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկվող՝ աուդիտորական կազմակերպության մասին տեղեկությունները

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկվում են աուդիտորական կազմակերպության վերաբերյալ առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

լրիվ անվանումը եւ կրճատ անվանումը (առկայության դեպքում).

կազմակերպաիրավական ձեւը.

գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն).

անհատական գրանցման համարը.

տեղեկություններ՝ որպես իրավաբանական անձ պետական գրանցման վերաբերյալ.

էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում).

Ինտերնետ ցանցում պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում).

բոլոր մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների գտնվելու վայրը (առկայության դեպքում).

տեղեկություններ՝ աուդիտորական կազմակերպության սեփականատերերի (մասնակիցների, բաժնետերերի) մասին (նշելով ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում), անվանումներն ու հասցեները).

տեղեկություններ՝ աուդիտորական կազմակերպության կոլեգիալ եւ (կամ) միանձնյա գործադիր մարմնի անդամների մասին (նշելով ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում)).

տեղեկություններ՝ աշխատանքային պայմանագրի հիման վրա աուդիտորական կազմակերպության աշխատող հանդիսացող աուդիտորների մասին (նշելով աուդիտորի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), անհատական գրանցման համարը, որակավորման ատեստատի (վկայականի, հավաստագրի) համարը).

տեղեկություններ՝ Հաշվապահների միջազգային դաշնության «Ֆիրմաների ֆորումի» (աուդիտորական կազմակերպությունների միջազգային ցանցերի) անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների միավորումներին անդամակցության (այլ տեսակի մասնակցության) վերաբերյալ (յուրաքանչյուր այդպիսի միջազգային ցանցի համար նշելով այդ ցանցի բոլոր անդամների անվանումներն ու գտնվելու վայրը կամ այն տեղեկատվության աղբյուրը (Ինտերնետ ցանցում պաշտոնական կայքի հասցեն եւ այլն), որտեղից կարող են ստացվել այդ տեղեկությունները).

տեղեկություններ՝ մյուս անդամ պետություններում եւ անդամ պետություն չհանդիսացող պետություններում որպես աուդիտորական կազմակերպություն (կամ համանման անձ) գրանցված լինելու վերաբերյալ (նշելով գրանցող մարմնի անվանումն ու անհատական գրանցման համարը (առկայության դեպքում)).

տեղեկություններ՝ աուդիտորական գործունեության վերաբերյալ անդամ պետության օրենսդրության պահանջների խախտման համար ներգործության

միջոցներ կիրառելու վերաբերյալ (նշելով ներգործության միջոցների կիրառման վերաբերյալ որոշում ընդունած՝ անդամ պետության մարմնի անվանումը, նշված որոշման ընդունման ամսաթիվը, նշված որոշման համարը (առկայության դեպքում), խախտման տեսակը եւ կիրառված ներգործության միջոցների վերաբերյալ տեղեկությունները).

տեղեկություններ՝ աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն անցնելու վերաբերյալ (նշելով աշխատանքի որակի ստուգում անցկացնելու ամսաթիվը եւ անդամ պետության՝ ստուգում անցկացրած մարմնի անվանումը).

տեղեկություններ՝ աուդիտորական կազմակերպության գործունեության դադարեցման վերաբերյալ (նշելով աուդիտորական կազմակերպության գործունեության դադարեցման վերաբերյալ որոշում ընդունած՝ անդամ պետության մարմնի անվանումը, այդ որոշման ընդունման ամսաթիվը):

Այն դեպքում, երբ աուդիտորական կազմակերպությունը, որի մասին տեղեկություններն ընդգրկվել են աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում, իրավունք ունի իրականացնելու աուդիտորական գործունեություն միայն այն անդամ պետությունում, որտեղ այն ընդգրկված է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում, ապա ռեեստրը պետք է պարունակի տվյալ սահմանափակման վերաբերյալ նշում:

Հոդված 13

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարելու լեզուն

1. Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարում են անդամ պետությունների պետական

լեզուներով եւ ռուսերենով, եթե ռուսերենը տվյալ անդամ պետության պետական լեզուն չէ:

2. Անդամ պետությունն ապահովում է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում ընդգրկված տեղեկությունների նույնականությունն անդամ պետության պետական լեզվով եւ ռուսերենով:

Հոդված 14

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու՝ անդամ պետությունների մարմինները

1. Անդամ պետությունը սահմանում է՝

ա) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու մարմինը (մարմինները):

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու մարմիններ կարող են լինել անդամ պետության պետական մարմինները, աուդիտորների մասնագիտական միավորումները (ինքնակարգավորվող կազմակերպությունները), հատուկ այդ նպատակով ստեղծված կազմակերպությունները.

բ) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու մարմնի (մարմինների) կողմից նշված ռեեստրը վարելու կարգը:

2. Անդամ պետությունը մյուս անդամ պետություններին եւ Եվրասիական

տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) տեղեկացնում է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու մարմնի (մարմինների) մասին:

3. Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու՝ անդամ պետությունների մարմինները միմյանց եւ Հանձնաժողովին տեղեկացնում են Ինտերնետ ցանցում իրենց պաշտոնական կայքերի մասին, որտեղ տեղադրվում են աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրները:

Հանձնաժողովը Միության պաշտոնական կայքում տեղադրում է Ինտերնետ ցանցում աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու՝ անդամ պետությունների մարմինների պաշտոնական կայքերի հասցեների ցանկը, որտեղ տեղադրվում են նշված ռեեստրները:

4. Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու՝ անդամ պետությունների մարմինների փոխգործակցության կարգը սահմանվում է Միության շրջանակներում միջազգային պայմանագրով:

Հոդված 15

Աուդիտորական գործունեության ստանդարտները

1. Անդամ պետություններում աուդիտորական գործունեությունն իրականացվում է աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներին համապատասխան: Սույն համաձայնագրի նպատակներով

աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներ ասելով ենթադրվում է Հաշվապահների միջազգային դաշնության կողմից ընդունվող հետեւյալ փաստաթղթերը՝

ա) որակի վերահսկողության միջազգային ստանդարտներ.

բ) աուդիտի միջազգային ստանդարտներ.

գ) աուդիտի պրակտիկայի վերաբերյալ միջազգային հաշվետվություններ.

դ) ամփոփիչ ստուգումների միջազգային ստանդարտներ.

ե) վստահություն ապահովող առաջադրանքների միջազգային ստանդարտներ.

զ) աուդիտին հարակից ծառայությունների միջազգային ստանդարտներ.

է) այլ փաստաթղթեր, որոնք Հաշվապահների միջազգային դաշնության կողմից սահմանվել են որպես աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների անբաժանելի մաս.

ը) սույն կետի «ա»-«է» ենթակետերում նշված փաստաթղթերում փոփոխությունների կատարում նախատեսող փաստաթղթեր:

2. Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներն անդամ պետությունում կիրառման համար գործողության մեջ են դրվում անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներից բացի՝ անդամ պետությունում կարող են կիրառվել նաեւ աուդիտորական գործունեության այլ կանոններ (աուդիտորական գործունեության ազգային ստանդարտներ (կանոններ), աուդիտորների մասնագիտական միավորումների (ինքնակարգավորվող կազմակերպությունների)՝ աուդիտորական գործունեության ստանդարտներ եւ այլն): Աուդիտորական գործունեության այլ կանոնների կիրառումն անդամ պետությունում թույլատրվում է, եթե դրանցով սահմանվում են պահանջներ, որոնք ներկայացվում են՝

ա) աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով չկարգավորվող հարցերի մասով աուդիտորական գործունեության իրականացմանը.

բ) աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով սահմանված պահանջները լրացնող աուդիտորական ընթացակարգերին, եթե դա պայմանավորված է աուդիտ անցկացնելու առանձնահատկություններով կամ աուդիտին հարակից ծառայությունների մատուցման առանձնահատկություններով.

գ) աուդիտ անցկացնելու կամ վստահություն ապահովող այլ ստուգումներ կատարելու ընթացքում այնպիսի լրացուցիչ աշխատանք կատարելու համար անհրաժեշտ աուդիտորական ընթացակարգերին, որի ծավալն ու բնույթը (այդ թվում անհատ աուդիտորի կողմից աուդիտորական կազմակերպության առջեւ դրված լրացուցիչ հարցերը) սահմանված են անդամ պետության օրենսդրությամբ, ինչպես նաեւ աուդիտորական եզրակացության, եզրակացության մեջ այդպիսի աշխատանքի արդյունքների արտացոլմանը (ներառյալ շարադրման կարգը, արտացոլվող տեղեկատվության կազմը, կոնկրետ ձեւակերպումները):

4. Եթե անդամ պետությունում աուդիտորական գործունեություն իրականացնելու համար թույլատրվում է կիրառել աուդիտորական գործունեության այլ կանոններ, ապա այդ կանոնները չպետք է՝

ա) հակասեն աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներին.

բ) ստեղծեն խոչընդոտներ՝ աուդիտորական գործունեություն իրականացնելու համար:

Հոդված 16

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների, աուդիտորների անկախությունը

1. Անդամ պետություններում կիրառվում է (աուդիտորական գործունեություն իրականացնելու մասով) Հաշվապահների միջազգային դաշնության կողմից ընդունված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգիրքը (այսուհետ՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգիրք):

2. Աուդիտորական կազմակերպությունները, անհատ աուդիտորները, աուդիտորները պետք է պահպանեն Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքին համապատասխան սահմանված պահանջները, որոնք ներկայացվում են աուդիտորական ծառայությունից օգտվող անձանցից (աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր ստորագրած անձանցից) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների, աուդիտորների անկախությանը՝ ուսումնասիրվող տեղեկատվության վերաբերյալ աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից կարծիք արտահայտելու հետ կապված աուդիտորական ծառայությունների մատուցման դեպքում:

3. Աուդիտորական կազմակերպությունները, անհատ աուդիտորները, աուդիտորներն իրավունք չունեն իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք հանգեցնում են շահերի բախման կամ ստեղծում են այդպիսի բախման առաջացման վտանգ:

Սույն համաձայնագրի նպատակներով շահերի բախում ասելով ենթադրվում է այն իրավիճակը, երբ աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի, աուդիտորի շահագրգռվածությունը կարող է ազդել աուդիտի ենթարկվող անձի հաշվապահական (ֆինանսական) հաշվետվության կամ նրա կողմից ներկայացվող այլ տեղեկատվության վերաբերյալ այդ աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կարծիքի վրա:

Հոդված 17

Աուդիտորների մասնագիտական էթիկան

Աուդիտորական գործունեություն իրականացնելիս (աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելիս) աուդիտորական կազմակերպությունները, անհատ աուդիտորները, աուդիտորները պետք է պահպանեն Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքով սահմանված՝ աուդիտորների մասնագիտական էթիկայի պահանջները:

Հոդված 18

Աուդիտորական գաղտնիքը

1. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված անձինք, ինչպես նաեւ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված այլ անձինք պետք է պահպանեն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան աուդիտորական գաղտնիք կազմող տեղեկատվության գաղտնիության ապահովմանը ներկայացվող պահանջները:

2. Աուդիտորական գաղտնիք են համարվում աուդիտորական գործունեության իրականացման եւ աուդիտորական գործունեության հետ կապված այլ ծառայությունների մատուցման ժամանակ աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ նրանց աշխատողների կողմից ստացված եւ (կամ) կազմված ցանկացած տեղեկություն ու փաստաթուղթ՝ բացառությամբ

ա) այն անձի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների, որին մատուցվել են աուդիտորական ծառայություններ,

բ) աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու վերաբերյալ տեղեկությունների,

գ) աուդիտորական վարձատրության չափի վերաբերյալ տեղեկությունների:

3. Աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը եւ նրանց աշխատողներն իրավունք չունեն երրորդ անձանց փոխանցելու աուդիտորական գաղտնիք կազմող տեղեկություններն ու փաստաթղթերը կամ հրապարակելու այդ տեղեկությունները կամ այդ փաստաթղթերի բովանդակությունը՝ առանց այն անձի նախնական գրավոր համաձայնության, որին մատուցվել են աուդիտորական ծառայությունները՝ բացառությամբ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որի տարածքում մատուցվում են աուդիտորական ծառայությունները:

Հոդված 19

Աուդիտորական ծառայությունների որակի ներքին վերահսկողությունը

1. Աուդիտորական ծառայություններ մատուցելիս աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը պետք է սահմանեն եւ պահպանեն աշխատանքի որակի ներքին վերահսկողության կանոններ:

2. Աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի աշխատանքի որակի ներքին վերահսկողության կանոնները սահմանվում են աուդիտորական գործունեության ստանդարտներին համապատասխան:

Հոդված 20

Աուդիտորական եզրակացությունը, եզրակացությունը, հաշվետվությունը

1. Աուդիտորական եզրակացությունը, եզրակացությունը, հաշվետվությունը կազմվում են աուդիտորական գործունեություն իրականացնելիս՝ աուդիտորական գործունեության ստանդարտներին համապատասխան:

2. Անդամ պետությունում աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձի կողմից կազմված աուդիտորական եզրակացությունը, եզրակացությունը, հաշվետվությունը մյուս անդամ պետություններում ճանաչվում են որպես պաշտոնական փաստաթղթեր:

Հոդված 21

Աուդիտորական ծառայությունների մատուցման կազմակերպումը

1. Անդամ պետությունը պետք է իր օրենսդրությամբ սահմանում է պահանջներ, որոնց համապատասխան՝

ա) աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը պետք է ապահովված լինեն ֆինանսական, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներով, որոնք անհրաժեշտ եւ բավարար են աուդիտորական ծառայությունների մատուցման համար.

բ) աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի՝ իրենց կողմից մատուցված աուդիտորական ծառայությունների դիմաց աուդիտորական վարձատրությունը՝

պետք է բավարար լինի աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված աուդիտորական ծառայությունը՝ աուդիտորական

գործունեության ստանդարտներին համապատասխան մատուցելու համար.

չի կարող պայմանավորված լինել աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից այն անկախ կարծիքին ներկայացվող ցանկացած պահանջի կատարմամբ, որը կձեւավորվի աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված աուդիտորական ծառայությունների մատուցման արդյունքում , ինչպես նաեւ աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից այդ անձին լրացուցիչ ծառայությունների մատուցմամբ.

չի կարող պայմանավորված լինել ապագայում որեւէ իրադարձության (փաստի) վրա հասնելով:

2. Աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը պետք է վարեն այն անձանց հաշվառումը, որոնց մատուցվել են աուդիտորական ծառայություններ: Յուրաքանչյուր այդպիսի անձի վերաբերյալ աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը պետք է ունենան հետեւյալ տեղեկատվությունը՝

ա) անվանումը, գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն եւ գործունեության փաստացի իրականացման հասցեն).

բ) աուդիտորական ծառայությունների մատուցման համար պատասխանատու անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

գ) սույն համաձայնագրի 23-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված աուդիտորական վարձատրության չափը եւ այդ անձից ստացված ցանկացած այլ ծառայության դիմաց վարձատրության չափը.

դ) աուդիտորական կազմակերպությանը, անհատ աուդիտորին իրենց կողմից մատուցված աուդիտորական ծառայությունների առնչությամբ ներկայացված ցանկացած գրավոր դժգոհություն:

3. Աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը պարտավոր են՝

ա) իրականացնել աուդիտորական ծառայությունների մատուցման յուրաքանչյուր պայմանագրի մասով աշխատանքային փաստաթղթերի վարում՝ աուդիտորական գործունեության ստանդարտներով սահմանված ծավալով ու կարգով.

բ) ձեւակերպել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի մասով աշխատանքային փաստաթղթերն աուդիտորական եզրակացությունը, եզրակացությունը, հաշվետվությունը կազմելու օրվանից 60 օրացուցային օրվանից ոչ ուշ.

գ) պահել աշխատանքային փաստաթղթերն աուդիտորական եզրակացությունը, եզրակացությունը, հաշվետվությունը կազմելու օրվանից առնվազն 5 տարի:

4. Անդամ պետությունն իրավունք ունի իր օրենսդրությամբ սահմանելու պահանջներ՝

ա) աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի աշխատանքային փաստաթղթերի վարելու նկատմամբ՝ ի լրումն սույն հոդվածով նախատեսված պահանջների.

բ) աուդիտորական կազմակերպությունների ղեկավարների եւ (կամ) աուդիտորական ծառայություն մատուցելու վերաբերյալ առաջադրանքների ղեկավարների նկատմամբ:

Հոդված 22

Պարտադիր աուդիտը

1. Պարտադիր աուդիտի ենթակա են՝

ա) վարկային կազմակերպության (բանկի), ապահովագրական

կազմակերպության, փոխադարձ ապահովագրական ընկերության, ոչ պետական կենսաթոշակային ֆոնդի, այն կազմակերպության տարեկան հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունները, որի արժեթղթերը թույլատրված են կազմակերպված սակարկություններին.

բ) արժեթղթերի ազդագրում ընդգրկվող տարեկան հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունները:

2. Պարտադիր աուդիտն անցկացվում է միայն աուդիտորական կազմակերպությունների կողմից:

3. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պահանջներից բացի՝ անդամ պետությունն իրավունք ունի իր օրենսդրությամբ սահմանելու այն դեպքերը, երբ տնտեսական սուբյեկտի հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի, ինչպես նաեւ այդպիսի դեպքերում անհատ աուդիտորներին տրամադրելու պարտադիր աուդիտ անցկացնելու իրավունք:

4. Պարտադիր աուդիտ անցկացնող աուդիտորական կազմակերպությունն իր գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տարի հրապարակում է Ինտերնետ ցանցում՝ իր պաշտոնական կայքում:

5. Աուդիտորական կազմակերպության կողմից սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան հրապարակվող տեղեկատվությունը պետք է ներառի առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

ա) տեղեկություններ՝ աուդիտորական կազմակերպության կազմակերպաիրավական ձեւի եւ դրա կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մասնաբաժինների՝ սեփականատերերի, մասնակիցների (աուդիտորների, աուդիտորական կազմակերպությունների, այլ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց) միջեւ բաշխման վերաբերյալ.

բ) տեղեկություններ՝ աուդիտորական կազմակերպությունների ցանցի վերաբերյալ (անվանումը, գլխավոր գրասենյակի գտնվելու վայրը, Ինտերնետ ցանցում պաշտոնական կայքի հասցեն) (եթե աուդիտորական

կազմակերպությունը մտնում է աուդիտորական կազմակերպությունների ցանցի, այդ թվում՝ միջազգային ցանցի կազմի մեջ).

գ) աուդիտորական կազմակերպության աշխատանքի որակի վերջին արտաքին ստուգումն ավարտելու ամսաթիվը, եւ տվյալ ստուգումն անցկացնող մարմնի (կազմակերպության) անվանումը:

6. Անդամ պետությունը, բացի սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված տեղեկություններից, իրավունք ունի իր օրենսդրությամբ սահմանելու այլ տեղեկություններ, որոնք ենթակա են հրապարակման պարտադիր աուդիտ անցկացնող աուդիտորական կազմակերպության կողմից:

Հոդված 23

Աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի գործունեության սահմանափակումները

1. Աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորն իրավունք չունեն զբաղվելու սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված աուդիտորական գործունեությունից ու ծառայությունների մատուցումից բացի այլ ձեռնարկատիրական գործունեությամբ:

2. Աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորն իրավունք ունեն մատուցելու աուդիտորական գործունեության հետ կապված, հետեւյալ ծառայությունները՝

ա) հաշվապահական հաշվառման կազմակերպում, հաշվապահական հաշվառման վերականգնում ու վարում, հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների կազմում, հաշվապահական խորհրդատվություն.

բ) հարկային խորհրդատվություն, հարկային հաշվառման կազմակերպում, հարկային հաշվառման վերականգնում ու վարում, հարկային հաշվարկների ու

հայտարարագրերի կազմում.

գ) ֆինանսատնտեսական գործունեության հետ կապված կառավարչական խորհրդատվություն, այդ թվում՝ կազմակերպությունների եւ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.

դ) տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում եւ հաշվապահական հաշվառման ավտոմատացման հարցերով խորհրդատվություն.

ե) գնահատման գործունեություն.

զ) ներդրումային ծրագրերի մշակում ու վերլուծություն, բիզնես-պլանների կազմում.

է) աուդիտորական գործունեության հետ կապված բնագավառներում գիտահետազոտական եւ փորձարարական աշխատանքների իրականացում.

ը) ուսուցում աուդիտորական գործունեության հետ կապված բնագավառներում (հաշվապահական հաշվառում, տնտեսագիտություն, ֆինանսներ եւ այլն).

թ) անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ ծառայություններ:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ աուդիտորական գործունեության հետ կապված ծառայությունները մատուցվում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված, այդ թվում՝ այդպիսի ծառայությունների մատուցման թույլտվության հետ կապված պահանջների պահպանմամբ:

4. Աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված ծառայություններն աուդիտի ենթարկվող անձին մատուցելու եւ աշխատանքները կատարելու իրավունք չունեն հետեւյալ

դեպքերում՝

ա) այդ ծառայությունների մատուցումը եւ (կամ) այդ աշխատանքների կատարումը հանգեցնում են աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի անկախությանը ներկայացվող պահանջների չպահպանման կամ ստեղծում են այդ պահանջը չպահպանելու վտանգ, հանգեցնում են շահերի բախման առաջացման կամ ստեղծում են այդպիսի բախման առաջացման վտանգ.

բ) աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը չեն կարող ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ուղղված աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի անկախությանը ներկայացվող պահանջների չպահպանման վտանգի վերացմանը կամ այդ վտանգի նվազեցմանն այնքանով, որ պահպանվեն Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքով սահմանված՝ աուդիտորների անկախությանն ու մասնագիտական էթիկային ներկայացվող պահանջները:

5. Անդամ պետությունն իրավունք ունի իր օրենսդրությամբ սահմանելու այնպիսի գործողությունների ցանկ, որոնք հանգեցնում են շահերի բախման առաջացման կամ ստեղծում են այդպիսի բախման առաջացման վտանգ՝ ի լրումն Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքով նախատեսված գործողությունների:

Հոդված 24

Ֆինանսական ոլորտում աուդիտորական գործունեություն իրականացնելու առանձնահատկությունները

1. Անդամ պետությունն իրավունք ունի իր օրենսդրությամբ սահմանելու լրացուցիչ պահանջներ ֆինանսական շուկայի այն մասնակիցների եւ կազմակերպությունների հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների եւ այլ տեղեկատվության աուդիտ իրականացնող աուդիտորական

կազմակերպությունների մասով, որոնց արժեթղթերը թույլատրված են կազմակերպված սակարկություններին, այդպիսի գործունեության իրականացմանը մասնակցող աուդիտորներին, ինչպես նաեւ աուդիտ անցկացնելու ընթացակարգերի եւ անդամ պետության համապատասխան լիազորված մարմնին՝ աուդիտորական եզրակացություն տրամադրելու կարգի մասով:

2. Անդամ պետությունն իրավունք ունի իր օրենսդրությամբ սահմանելու լրացուցիչ պահանջներ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպությունների, այդպիսի գործունեության իրականացմանը մասնակցող աուդիտորների, ինչպես նաեւ ազգային (կենտրոնական) բանկի հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների աուդիտ անցկացնելու ընթացակարգերի եւ աուդիտորական եզրակացություն տրամադրելու կարգի մասով:

Հոդված 25

Անդամ պետությունում աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողության կազմակերպումը

1. Անդամ պետությունն ապահովում է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողության իրականացումը:

2. Աուդիտորական կազմակերպությունների եւ անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողության առարկան աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից հետեւյալի պահպանումն է՝

ա) աուդիտորական գործունեության վերաբերյալ այն անդամ պետության օրենսդրության պահանջները, որի աուդիտորական կազմակերպությունների,

անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում գրանցված են աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը, եւ այն անդամ պետության օրենսդրության պահանջները, որտեղ իրականացվում է աուդիտորական գործունեությունը.

բ) աուդիտորական գործունեության ստանդարտներ, աուդիտորների անկախությանն ու մասնագիտական էթիկային ներկայացվող պահանջներ, այդ թվում պահանջներ, որոնք ներկայացվում են՝

աշխատանքի որակի ներքին վերահսկողության կանոնների առկայությանն ու աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից դրանց պահպանմանը.

աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի կատարմանն ուղղված ռեսուրսների բավարար լինելուն.

աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից ստացված աուդիտորական վարձատրության չափի հիմնավորվածությանը:

3. Աշխատանքի որակի արտաքին վերահսկողությունը պետք է ներառի նաեւ՝

ա) աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի մի մասի կատարման ստուգումը.

բ) աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի աշխատողը հանդիսացող աուդիտորների աշխատանքի որակի ստուգումը:

4. Անդամ պետությունը՝

ա) սահմանում է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողության իրականացման կարգը.

բ) սահմանում է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմինը (մարմինները): Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմիններ կարող են լինել անդամ պետության պետական մարմինները, աուդիտորների մասնագիտական միավորումները (ինքնակարգավորվող կազմակերպությունները) եւ այլ կազմակերպություններ:

5. Աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող՝ անդամ պետության մարմինն իրավունք ունի իրականացնելու տվյալ անդամ պետությունում աուդիտորական գործունեություն իրականացնող՝ մյուս անդամ պետությունների աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն:

6. Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող՝ անդամ պետությունների մարմինների փոխգործակցության կարգը, այդ թվում՝ աշխատանքի որակի արտաքին ստուգումներին դրանց մասնակցության եւ ներգործության միջոցների կիրառման վերաբերյալ որոշում ընդունելիս խորհրդակցությունների անցկացման մեխանիզմը սահմանվում են Միության շրջանակներում միջազգային պայմանագրով:

Հոդված 26

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողությանը ներկայացվող պահանջները

1. Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի ներքին վերահսկողություն իրականացնելիս անդամ

պետությունն ապահովում է հետեւյալ հիմնական պահանջների պահպանումը՝

ա) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմնի անկախությունն այն աուդիտորական կազմակերպություններից, անհատ աուդիտորներից, որոնց մասով իրականացվում է աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն.

բ) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմնի հաշվետվողականությունն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված՝ աուդիտորի մասնագիտությունից անկախ մարմնին.

գ) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին հսկողություն իրականացնող մարմնի, անդամ պետությունում աուդիտորական գործունեություն իրականացնող բոլոր աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների՝ վերահսկողության տակ լինելը.

դ) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմնի ապահովվածությունն անհրաժեշտ ֆինանսական, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներով.

ե) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմինների մասնագիտական կոմպետենտության պատշաճ մակարդակը.

զ) աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի աշխատանքի որակի արտաքին ստուգում անցկացնելու համար անձանց նշանակման ընթացակարգի թափանցիկությունը, որի արդյունքում ապահովվում է նաեւ այդ անձանց եւ այն աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի միջեւ շահերի բախման առաջացման կանխումը, որոնց մասով իրականացվում է

աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն.

է) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմնի հաշվետվությունները՝ աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի աշխատանքի որակի արտաքին ստուգման արդյունքների վերաբերյալ.

ը) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողության ընդհանուր արդյունքների թափանցիկությունը.

թ) աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից՝ իրենց աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնելու արդյունքներով հայտնաբերված խախտումների ու թերությունների պարտադիր վերացումը՝ աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից սահմանված ժամկետում:

2. Աշխատանքի որակի արտաքին ստուգում պետք է նշանակվի՝

ա) աուդիտորական կազմակերպության մասով՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցման հիմքով, սակայն հինգ տարին առնվազն մեկ անգամ.

բ) անհատ աուդիտորի մասով՝ յոթ տարին առնվազն մեկ անգամ:

3. Աուդիտորական կազմակերպության կամ անհատ աուդիտորի աշխատանքի որակի արտաքին ստուգում կարող է նշանակվել աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմին ներկայացված գրավոր բողոքի հիման վրա:

4. Աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի աշխատանքի որակի արտաքին ստուգման ծավալը պետք է համապատասխանի այն աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի գործունեության

մասշտաբին ու բարդությանը, որի մասով իրականացվում է աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն:

Հոդված 27

Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների, աուդիտորների պատասխանատվությունը

Աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը, աուդիտորը պատասխանատվություն են կրում աուդիտորական գործունեության վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության պահանջները, աուդիտորական գործունեության ստանդարտները, աուդիտորների անկախությանն ու մասնագիտական էթիկային ներկայացվող պահանջները խախտելու համար այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում կատարվել է խախտումը:

Հոդված 28

Աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի, աուդիտորի նկատմամբ ներգործության միջոցները

1. Անդամ պետությունն ապահովում է ներգործության միջոցների կիրառումն աուդիտորական գործունեության վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության պահանջների, աուդիտորական գործունեության ստանդարտների, աուդիտորների անկախությանն ու մասնագիտական էթիկային ներկայացվող պահանջների խախտում թույլ տված աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի, աուդիտորի նկատմամբ այդպիսի միջոցների կիրառման համար լիազորված մարմինների կողմից (այսուհետ՝ ներգործության միջոցներ):

2. Ներգործության միջոցները կիրառվում են այն անդամ պետության աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի, աուդիտորի նկատմամբ ներգործության միջոցների կիրառման համար լիազորված մարմնի կողմից, որտեղ արձանագրվել է խախտումը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

3. Անդամ պետությունը սահմանում է ներգործության միջոցները եւ դրանց կիրառման կարգը: Մեկ անդամ պետության աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների նկատմամբ, որոնք աուդիտորական գործունեություն են իրականացնում մյուս անդամ պետության տարածքում, կիրառվում են այդ մյուս անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված փոխազդեցության բոլոր միջոցները:

4. Անդամ պետությունն ապահովում է, որ ներգործության միջոցները սահմանելիս հաշվի առնվեն առնվազն հետեւյալ հանգամանքները՝

ա) թույլ տրված խախտման բնույթը (այդ թվում՝ պարբերականությունը), դիտավորությունն ու ծանրության աստիճանը.

բ) ներգործության միջոցի համապատասխանությունը թույլ տրված խախտման ծանրության աստիճանին,

գ) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների, աուդիտորների իրավունքների եւ օրինական շահերի անհիմն սահմանափակման չթույլատրումը.

դ) բացասական հետեւանքների առաջացումը (առաջացման վտանգը).

ե) վնասի (կորստի) հատուցումը հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններից օգտվողներին, աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների կողմից մատուցվող ծառայություններից օգտվողներին, այլ անձանց:

5. Անդամ պետությունն ապահովում է կիրառվող ներգործության միջոցների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

Հոդված 29

Աուդիտորական գործունեության կարգավորումն անդամ պետությունում

1. Անդամ պետությունը սահմանում է աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինը (մարմինները): Աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմին (մարմիններ) կարող է լինել անդամ պետությունների պետական մարմինը, հատուկ այդ նպատակով ստեղծված կազմակերպությունը:

2. Աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինը պետք է անկախ լինի աուդիտորական կազմակերպություններից, անհատ աուդիտորներից, աուդիտորներից, աուդիտորների մասնագիտական միավորումներից (ինքնակարգավորվող կազմակերպություններից):

3. Աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների շարքին են դասվում՝

ա) աուդիտորական գործունեության ոլորտում պետական քաղաքականության մշակումը.

բ) աուդիտորական գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ընդունումը (եթե անդամ պետության օրենսդրությամբ այդ իրավունքը սահմանվել է աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացմանը լիազորված մարմնի համար), ինչպես նաեւ աուդիտորների անկախությանն ու մասնագիտական էթիկային ներկայացվող պահանջների սահմանումը.

գ) անդամ պետությունում աուդիտորական ծառայությունների շուկայի

վիճակի վերլուծությունը.

դ) աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված՝ մյուս անդամ պետությունների մարմինների հետ փոխգործակցությունը.

ե) սույն համաձայնագրով եւ (կամ) անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

4. Աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման նպատակով անդամ պետությունն աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմնին պետք է օժտի աուդիտորական կազմակերպություններից, անհատ աուդիտորներից, աուդիտորներից, աուդիտորների մասնագիտական միավորումներից (ինքնակարգավորվող կազմակերպություններից) անհրաժեշտ տեղեկատվությունն ու փաստաթղթերը պահանջելու իրավունքով, ինչպես նաեւ պետք է պարտավորեցնի աուդիտորական կազմակերպություններին, անհատ աուդիտորներին, աուդիտորներին, աուդիտորների մասնագիտական միավորումներին (ինքնակարգավորվող կազմակերպություններին) նշված մարմնին տրամադրել այդ տեղեկատվությունը եւ փաստաթղթերը:

Հոդված 30

Աուդիտորների մասնագիտական միավորումների (ինքնակարգավորվող կազմակերպությունների) մասնակցությունն աուդիտորական գործունեության կարգավորման գործընթացին

1. Անդամ պետությունները նպաստում են աուդիտորների մասնագիտական միավորումների (ինքնակարգավորվող կազմակերպությունների) ստեղծմանն ու դրանց կողմից իրենց գործունեության իրականացմանը:

2. Անդամ պետություններն ապահովում են պայմաններ աուդիտորական գործունեության կարգավորման գործընթացին աուդիտորների մասնագիտական միավորումների (ինքնակարգավորվող կազմակերպությունների) մասնակցության համար, ներկայացնում են հետեւյալի հնարավորությունները՝

ա) մասնակցություն աուդիտորական գործունեության ոլորտում պետական քաղաքականության մշակմանը.

բ) մասնակցություն աուդիտորական գործունեության կարգավորման ոլորտում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակմանն ու քննարկմանը.

գ) մասնակցություն անդամ պետությունում աուդիտորական ծառայությունների շուկայի վիճակի վերլուծությանը.

դ) աուդիտորական գործունեության վերաբերյալ անդամ պետության օրենսդրության եւ աուդիտորական գործունեության ստանդարտների կիրառման գործելակերպի ընդհանրացում.

ե) այդ միավորումների անդամների շահերի ներկայացում անդամ պետության պետական իշխանության մարմիններում:

3. Հաշվի առնելով սույն համաձայնագրի 29-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պահանջները՝ անդամ պետությունն աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմնին կարող է վերապահել աուդիտորական գործունեության կարգավորման առանձին գործառույթների կատարումն աուդիտորների մասնագիտական միավորումներին (ինքնակարգավորվող կազմակերպություններին) պատվիրակելու իրավունք:

Եթե աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինն աուդիտորների մասնագիտական

միավորումներին (ինքնակարգավորվող կազմակերպություններին) պատվիրակել է աուդիտորական գործունեության կարգավորման որեւէ գործառույթ, ապա նշված մարմինը պետք է՝

հնարավորություն ունենա ցանկացած ժամանակ վերսկսելու աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթի կատարումը.

պարբերաբար իրականացնի վերահսկողություն՝ պատվիրակված գործառույթն աուդիտորների մասնագիտական միավորումների (ինքնակարգավորվող կազմակերպությունների) կողմից իրականացնելու նկատմամբ:

Հոդված 31

Աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինների փոխգործակցությունը

1. Անդամ պետությունն աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմիններին օժտում է մյուս անդամ պետությունների համապատասխան մարմինների հետ փոխգործակցություն իրականացնելու իրավունքով:

2. Անդամ պետությունում աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մի քանի մարմինների առկայության դեպքում անդամ պետությունը սահմանում է մյուս անդամ պետությունների՝ աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինների հետ փոխգործակցության համար պատասխանատու լիազորված մարմին:

3. Անդամ պետությունը մյուս անդամ պետություններին ու Հանձնաժողովին ծանուցում է աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների

իրականացման համար լիազորված մարմինների եւ մյուս անդամ պետությունների՝ աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինների հետ փոխգործակցության համար պատասխանատու մարմնի մասին:

4. Աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինների փոխգործակցության կարգը սահմանվում է Միության շրջանակներում միջազգային պայմանագրով:

Հոդված 32

Աուդիտորական գործունեության ներքին կարգավորման առանձնահատկությունները

1. Հայաստանի Հանրապետությունն իրավունք ունի իր օրենսդրությամբ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպություններին վերապահելու Հայաստանի Հանրապետությունում աուդիտին հարակից ծառայություններ մատուցելու իրավունք:

2. Անդամ պետությունն իրավունք ունի օտարերկրյա աուդիտորական կազմակերպություններին իր օրենսդրությամբ վերապահելու այն աուդիտորական կազմակերպությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում 49 տոկոսից ավելի մասնաբաժին ունենալու իրավունքը, որի վերաբերյալ տեղեկություններն ընդգրկվում են տվյալ անդամ պետության աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում: Նշված աուդիտորական կազմակերպություններն իրավունք ունեն իրականացնելու աուդիտորական ծառայություններ միայն այն անդամ պետությունում, որի աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում դրանք ընդգրկված են:

3. Ղազախստանի Հանրապետությունը, իր օրենսդրությանը համապատասխան, իրավունք ունի աուդիտորական գործունեության

իրականացմանը որպես աուդիտոր մասնակցելու ցանկություն ունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ չկիրառելու սույն համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված պահանջը: Այն անձինք, որոնց մասին տեղեկություններն ընդգրկված են Ղազախստանի Հանրապետության աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում, իրավունք ունեն մասնակցելու աուդիտորական գործունեության իրականացմանը միայն Ղազախստանի Հանրապետությունում:

4. Հայաստանի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ղրղզական Հանրապետությունն իրավունք ունեն իրենց սահմանադրությամբ սահմանելու համապատասխանաբար Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզական Հանրապետությունում աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության կամ Ղրղզական Հանրապետության իրավաբանական անձի մոտ որպես աուդիտորական կազմակերպություն՝ աշխատանքային պայմանագրերի հիման վրա հիմնական աշխատանքի վայրի իր աշխատողներ հանդիսացող աուդիտորների թիվը չպետք է լինի 3 հոգուց պակաս: Նշված աուդիտորական կազմակերպություններն իրավունք ունեն աուդիտորական գործունեություն իրականացնելու միայն այն անդամ պետությունում, որտեղ դրանք ընդգրկված են աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների եւ աուդիտորների ռեեստրում.

5. Ղազախստանի Հանրապետությունում գնահատման գործունեության ծառայություն իրականացնելու իրավունք չունեն անդամ պետությունների աուդիտորական կազմակերպությունները, անհատ աուդիտորները, այդ թվում՝ Ղազախստանի Հանրապետության աուդիտորական կազմակերպությունները, անհատ աուդիտորները:

Հոդված 33

Անցումային դրույթներ

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ աուդիտորական կազմակերպություն, անհատ աուդիտոր, աուդիտոր հանդիսացող անձինք սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո պահպանում են աուդիտորական գործունեություն իրականացնելու (աուդիտորական գործունեության իրականացմանը մասնակցելու) իրավունքը:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հայտարարված՝ հավակնորդների կողմից որակավորման քննությունը հանձնելու արդյունքները վավերական են սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո:

3. Մինչեւ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրն աուդիտորների կողմից ուսուցում անցնելու փաստը հաստատող փաստաթղթերն ու այլ տեղեկատվություն վավերական են սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո:

4. Նախքան սույն համաձայնագրի 14-րդ հոդվածի 4-րդ կետով, 25-րդ հոդվածի 6-րդ կետով, 31-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ անդամ պետությունների մարմինների փոխգործակցությունն իրականացվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 68-րդ հոդվածի դրույթների հիման վրա:

Հոդված 34

Վեճերի կարգավորումը

Սույն համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 35

Եզրափակիչ դրույթներ

1. Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով եւ սույն համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:

2. Սույն համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ Միության իրավունքի մասն է կազմում:

3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո՝ բացառությամբ սույն համաձայնագրի 3-9-րդ, 15-20-րդ հոդվածների, 21-րդ հոդվածի 2-4-րդ կետերի, 22-24-րդ հոդվածների, 25-րդ հոդվածի 5-րդ կետի, 26-րդ հոդվածի 2-4-րդ կետերի, 27-րդ, 28-րդ եւ 32-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի այն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, որով նախատեսվում է աուդիտի բնագավառի ծառայությունները դասել այն ոլորտներին (ենթաոլորտներին), որտեղ գործում է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ծառայությունների միասնական շուկա :

Կատարված է Մոսկվա քաղաքում 2022 թվականի ապրիլի «19»–ին,

մեկ բնօրինակից՝ ռուսերեն:

Սույն համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը՝ որպես սույն համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետության կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության կողմից՝**	**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**	**Ղրղզական Հանրապետության կողմից՝**	**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2022 թվականի ապրիլի 19-ին քաղաք Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում աուդիտորական գործունեություն իրականացնելու մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն